

Հինգերորդ հաղորդում

**Քանանի երկրի արգասիքը և  
բարի երկրի հատկացման խորքային նշանակությունը**

Գրվածքների ընթերցում. Հս 5:12, 13:1–22:34, Կդս 1:12, Գրծ 26:18

**I. Երբ Իսրայելի զավակները մտան Քանանի երկիրը, մանանան դադարեց. այլևս մանանա չկար, իսկ նրանք Քանանի երկրի բերքից էին ուտում՝ Հս 5:12.**

Ա. Այն, որ մանանան դադարեց, երբ ժողովուրդը սկսեց հողի արգասիքն ուտել, ցույց է տալիս, որ հողի արգասիքը մանանայի շարունակությունն էր:

Բ. Իսրայելի՝ անապատում թափառելու ժամանակ կերած մանանան (Ելց 16) Քրիստոսի՝ որպես երկնային կերակրի նախատիպ է, որն Աստված էր ուղղակիորեն Իր ընտրյալ ժողովրդին տվել, որի համար ուտողներից որևէ տքնություն չէր պահանջվում:

Գ. Աստծու՝ Իսրայելին տված խոստացված երկրի հարուստ արգասիքը, երբ նրանք Քանանում պատերազմում էին, Քրիստոսի նախատիպն է՝ որպես հավատացյալներին տրված ավարտունացած կենսամատակարարում, որը նրանցից պահանջում է տքնել Նրա վրա՝ Երկ Օր 8:7-10.

1. Ինչպես պատկերված է այստեղի նախատիպերով, Քրիստոսին՝ որպես երկրի, տիրելուց հետո մենք պետք է տքնենք Նրա վրա, որպեսզի Նրանից ինչ-որ բան առաջացնենք, որը կդառնա մեր սնունդը, մեր կենսամատակարարումը:

2. Երբ մենք ուտում ենք Քրիստոսին և վայելում Նրան՝ որպես բարի երկրի, մենք կազմվում ենք Նրանով՝ կյանքով, բնությամբ և արտահայտությամբ դարձվելով նույնը, ինչ Քրիստոսն է՝ Հվի 6:57, Փլպ 1:19-21ա:

3. Ի վերջո Քրիստոսին՝ որպես մեր ժառանգության, մեր սեփականության, վայելելը մեզ կազմությամբ կդարձնի Աստծու ժառանգությունը, Աստծու գանձը և սեփականությունը՝ Եփս 1:11-14, 18բ, հմնտ Ելց 19:5:

Դ. Եզիպտոսում, անապատում և բարի երկրում իսրայելացիները փորձառաբար ապրեցին ուտելու երեք փուլ.

1. Եզիպտոսում Իսրայելի ժողովուրդը կերավ գատկական գառը՝ 12:3, 8-9.

ա. Ճիշտ ինչպես գատկական գառի խորոված միսը պետք էր կենսամատակարարման համար ուտել, այնպես էլ մենք պետք է մեր կենսամատակարարման համար Քրիստոսին ուտենք՝ խխ. 8-10, Հվի 6:53, 55-57.

1) Մարդու անկման խնդիրը լուծելու և Աստծու նախնական մտադրությունն իրականացնելու համար անհրաժեշտ են և՛ կյանք, և՛ փրկագնում:

## ՀԵՍՈՒԻ ԳԻՐՔ

- 2) Քրիստոսի արյան միջոցով Աստծու կատարած իրավական փրկագնումն Աստծու նպատակին հասնելու միջոցն է մեր օրգանական փրկության համար Քրիստոսին՝ որպես կյանքի, մեր մեջ բաշխելու համար՝ Հռմ 5:10:
- բ. Իսրայելի զավակները պետք է գատկական գառը գլխով, ոտքերով և ներքին մասերով ուտեին՝ Ելց 12:9.
  - 1) Գլուխը խորհրդապատկերում է իմաստություն, ոտքերը՝ գործունեություն և շարժում, իսկ ներքին մասերը՝ Քրիստոսի էության ներքին մասերը, ներառյալ Նրա միտքը, զգացմունքը, կամքը և սիրտը՝ իրենց բոլոր գործառույթներով:
  - 2) Չատկական գառը գլխով, ոտքերով և ներքին մասերով ուտելը խորհրդապատկերում է Քրիստոսին Իր ամբողջությամբ ընդունելը՝ Իր իմաստությամբ, Իր գործունեությամբ ու շարժումով և ներքին մասերով հանդերձ՝ Հվի 6:57, Ա Կրթ 1:24, Հյտ 14:4բ, Փլպ 1:8:
2. Անապատում իսրայելացիները մանանա կերան՝ Ելց 16:14-16, 31, Թվց 11:7.
  - ա. Աստված, Իր ժողովրդին մանանա տալով, ցույց տվեց, որ Իր մտադրությունը նրանց կազմությունը փոխելն է՝ նրանց սննդակարգը փոխելով՝ Ելց 16:14-15.
    - 1) Անունով Իսրայելի զավակները եգիպտացի չէին, բայց բնությամբ և կազմությամբ նրանք եգիպտացիներից ոչնչով չէին տարբերվում՝ իս. 3:
    - 2) Եգիպտական սննդակարգը նշանակում է այն ամենը, ինչով մենք ուզում ենք կերակրվել՝ բավարարվածություն գտնելու համար՝ Թվց 11:4-6:
  - բ. Աստված ուզում էր, որ Իր փրկագնած մարդիկ մոռանան եգիպտական սննդակարգը և երկնային կերակրին հաղորդ լինեն՝ Երկ Օր 8:3.
    - 1) Որքան շատ ենք մանանա ուտում, այնքան շատ ենք Աստծուն համապատասխանում, նույնանում Նրա հետ և ապրում ու քայլում ըստ այն ամենի, ինչ Նա է:
    - 2) Այն, ինչ մեզ ամենից շատ է օգնում Տիրոջ հետ մեր ապրած ամենօրյա կյանքում, Քրիստոսին՝ որպես երկնային կերակրի, ուտելն է. Քրիստոսին ուտելով՝ մենք դառնում ենք Քրիստոս, այսինքն՝ Քրիստոսը դառնում է մեր կազմությունը՝ Հվի 6:56-58:
3. Քանանում իսրայելացիները կերան բարի երկրի արգասիքը՝ Հս 5:11-12.
  - ա. Ուտելու երրորդ փուլում նրանք կերան բարի երկրի հարուստ մատակարարումը, որը նրանց կազմությունը էլ ավելի փոխեց և նրանց հաղթող ժողովուրդ դարձրեց:

- բ. Բարի երկիրը ցորենի, գարու, որթատունկերի, թզենիների, նոնենիների, յուղով ձիթենիների և մեղրի երկիր էր, որոնք բոլորը Քրիստոսի անքննելի հարստության նախատիպեր էին՝ Երկ օր 8:8, Եփս 3:8:
- գ. Վայելելով բարի երկրի հարստությունը՝ Իսրայելի ժողովուրդը հաղթեց երկրի ցեղերին, հաստատեց Աստծու թագավորությունը և կառուցեց տաճարը՝ որպես երկրի վրա Աստծու բնակավայրը՝ Հս 5:11-12:
- 4. Այս երեք փուլերը հավատացյալների՝ Քրիստոսին վայելելու երեք փուլերի նախատիպն են՝ Նրան ուտելու միջոցով՝ Հվի 6:51-57, Ա Կրթ 5:7-8, 10:3-4, Փլպ 1:19.
  - ա. Առաջին երկու փուլերում ուտելու շնորհիվ հավատացյալները եռանդ են ստանում՝ աշխարհը լքելու համար և կազմվում են Քրիստոսով՝ որպես երկնային տարրով՝ Հվի 6:51-57, Ա Կրթ 5:7-8, 10:3-4:
  - բ. Աստծու տնտեսության նպատակին հասնելու համար մեզ անհրաժեշտ է այնքան առաջընթաց ապրել, մինչև որ հասնենք Քրիստոսի՝ որպես բարի երկրի հարուստ արգասիքն ուտելու ամենաբարձր փուլին, որպեսզի կարողանանք հաղթել հոգևոր թշնամիներին, կառուցվել Աստծու բնակատեղը լինելու համար և երկրի վրա հաստատել Աստծու թագավորությունը:
  - գ. Երբ մենք ուտում ենք Քրիստոսին՝ որպես բարի երկրի արգասիքի, կազմվում ենք Նրանով և կյանքով, բնությանը և արտահայտությանը դառնում նույնը, ինչ Քրիստոսն է, եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի կառուցման համար՝ Եփս 4:16:

**II. Բարի երկրի հատկացման խորքային նշանակությունն այն է, որ մենք՝ երկրին տիրողներս, միևնույն Քրիստոսին տարբեր ձևերով ենք փորձառաքար ապրում՝ Հս 13:1-22:34.**

- Ա. Աստծու տնտեսության մեջ կա մի բան, որը կոչվում է երկրի հատկացումը՝ Կդս 1:12:
- Բ. Երբ Հեսուն երկրին տիրեց, Աստված նրան պատվիրեց որպես բաժին հատկացնել տիրած երկիրը և նույնիսկ այն երկիրը, որին դեռ չէին տիրել, քանի որ Աստծու աչքին ամբողջ երկիրն Իսրայելի համար էր՝ Հս 13:6.
  - 1. Աստված Իր իմաստությամբ բարի երկիրը որպես ամբողջություն չհատկացրեց Իսրայելի բոլոր զավակներին. ընդհակառակը, Նա այդ երկիրը, այսինքն՝ Քրիստոսին, որպես բաժիններ հատկացրեց տարբեր ցեղերին՝ Ես. 7:
  - 2. Քանի որ ցեղերը տարբեր էին, Աստված չէր կարող միևնույն երկիրը նույն ձևով տալ յուրաքանչյուր ցեղին:
  - 3. Բոլոր ցեղերին հող հատկացվել էր, բայց նրանք երկրի տվյալ մասերն ըստ այն բանի էին ստացել, ինչ իրենք էին՝ 14:6-15, 18:1–19:27:

## ՀԵՍՈՒԻ ԳԻՐՔ

4. Երկրի հատկացման այս նախատիպի իրագործումն այսօր մեր մեջ է՝ Կդս 1:12.
  - ա. Մենք բոլորս ունենք նույն Քրիստոսին, բայց Քրիստոսին տարբեր ձևերով ենք փորձառարար ապրում՝ Ա Կրթ 1:2:
  - բ. Մեր ունեցած երկիրը (Քրիստոսը) ըստ այն բանի է, ինչ մենք ենք՝ Հռմ 12:3, Եփս 4:7:
- Գ. Կդս 1:12-ում Պողոսն օգտագործում է համաբովանդակ երկրի գաղափարը՝ խոսելով «սրբերին հատկացված բաժնի» մասին.
  1. «Բաժին» թարգմանված հունարեն բառը նաև կարելի է մեկնել «վիճակ»՝ նկատի ունենալով «հատկացում»:
  2. Երբ Պողոսը գրում էր Կողոսացիներին ուղղված թուղթը, նա նկատի ուներ բարի երկիրն Իսրայելի զավակներին որպես ժառանգություն հատկացնելու նկարը. նա օգտագործեց Հին Կտակարանի «բաժին» բառը՝ երկրի մասին հինկտակարանյան գրառումը որպես նախապատմություն ունենալով՝ Հս 14:2.
    - ա. Կողոսացիներին ուղղված թղթում Քրիստոսը բացահայտվում է որպես մեր բաժինը, մեր վիճակը՝ 1:15-19, 2:6-15:
    - բ. Ճիշտ այնպես, ինչպես Քանանի երկիրն էր ամեն ինչ Իսրայելի զավակների համար, այնպես էլ Քրիստոսը՝ բարի երկրի նախատիպի իրականությունը, ամեն ինչ է մեզ համար՝ 1:12:
  3. Քրիստոսը՝ որպես առաջնություն ունեցող և համաբովանդակ Անձը, սրբերին հատկացված բաժնին է՝ խ. 12:
  4. Նորկտակարանյան հավատացյալներին հատկացված բաժինը ֆիզիկական հող չէ. այն համաբովանդակ Քրիստոսն է՝ որպես կենդանարար Հոգին՝ 2:6-7, Գղտ 3:14.
    - ա. Բարի երկրի հարստությունը Քրիստոսի անքննելի հարստության՝ որպես Իր Հոգու մեջ Իր հավատացյալների համար առատ մատակարարման տարբեր տեսանկյունների նախատիպ է՝ Երկ Օր 8:7-10, Եփս 3:8, Փլպ 1:19:
    - բ. Վայելելով երկրի հարստությունը՝ Քրիստոսին հավատացողները կառուցվում են՝ լինելու Նրա Մարմինը՝ որպես Աստծու տունը և Աստծու թագավորությունը՝ Եփս 1:22-23, 2: 21-22, Ա Տմթ 3:15, Մտթ 16:18-19, Հռմ 14:17:
- Դ. Գրծ 26:18-ում Պողոսն անդրադառնում է համաբովանդակ Քրիստոսին՝ որպես մեր ժառանգությանը.
  1. Այն բանի արդյունքում, որ մեր աչքերը բացվել են, և մենք Սատանայի իշխանությունից փոխադրվել ենք Աստծու մոտ, մենք ոչ միայն մեղքերի թողություն ունենք, այլև աստվածային ժառանգություն ենք ստանում:
  2. Այս ժառանգությունը Եռամեկ Աստված Ինքն է՝ այն ամենով, ինչ ունի, ինչ արել է և ինչ անելու է Իր փրկագնած ժողովրդի համար. այս Եռամեկ Աստված մարմնավորված է համաբովանդակ Քրիստոսի

## ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

մեջ, ով սրբերին հատկացված բաժինն է՝ որպես նրանց ժառանգությունը՝ Կղս 2:9:

3. Բարի երկիրն իսկապես համարվանդակ Քրիստոսի նախատիպն է, պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստծու մարմնավորման, ով տրվել է մեզ որպես մեր ժառանգությունը՝ 1:12: